

Գ Ի Տ Ա Կ Ա Ն

ԱՅՍՊԷՍ ԿՈՉՈՒԱԾ ՊԱՐՄԻՅ ԺՈՂՈՎԸ

Այս ժողովի մասին տեղեկութիւն են տալիս մեզ Հայ պատմագիրներից Սերէոսն ու Ասողիկը, բայց անուղղակի կերպով: Սորա պատմում են, որ բիւզանդացի զինուորները գանգաւում են Կոստանդին կայսրին (= Կոստանս II., 642—668), թէ Հայոց երկրում նրանց անօրէնների տեղ են դնում և առհասարակ չեն ընդունում Քաղկեդոնի ժողովն ու Լեոնի տուժարը: Կայսրը «չարիքի» առաջն առնելու համար հրովարտակ և մի Բագրաւանցի փիլիսոփայ Դաւիթ անունով ուղարկում է Հայաստան, որպէսզի հակառակութիւնը մէջտեղից վերցնեն և «Հոռով» հետ միաբանին, ընդունելով Քաղկեդոնի ժողովն ու Լեոնի տուժարը:

Այդ հրովարտակին ու միութեան առաջարկին պատասխանելու համար հայերը ժողով են անում Դուինում ներսէս Գ. Շինոզ (641/642—661) կաթողիկոսի նախագահութեամբ և Թէոդորոս Ռշտունու ներկայութեամբ, և միութեան առաջարկը չընդունելով՝ ընդարձակ պատասխան են դրում կայսրին¹: Ահա այդ պատասխանի մէջ յիշատակուած է Պարսից ժողովը հետևեալ կերպով, իբրև թէ Պարսից թագաւոր Խոսրով II. Պարուէզը (590—628) լսելով, որ քրիստոնեաների մէջ հերձուած կայ և նորա երկու խմբի բաժանուած նզովում են մէկ մէկու, ցանկանում է վերահասու լինել ճշմարտութեանը և այդ նպատակով հրաման է տալիս արևելքի և Ասորեստանի եպիսկոպոսներին արքունի դուռը գալ, ճշմարտութիւնը վերականգնել

1) Պատմութիւն Սերէոսի եպիսկոպոսի ի Հերակլն. Պետերբուրգ, 1879. էջ 118—119. Հայոց պատասխանը՝ էջ 120—134. մեզ համար կարևոր է միայն առաջին մասը՝ 120—123. հմտ. Ստեփանոսի Տարօնեցոյ Ասողկան Պատմութիւն Տիեզերական. Պետերբուրգ, 1885. էջ 90—98.

և սխալը մերժել, իրեն կողմից ներկայացուցիչ է կարգում ժողովում՝ Սմբատ Բագրատունուն և արքունի բժշկապետին: Հայոց կողմից այդ ժողովին պատահմամբ ներկայ են լինում Մամիկոնեից Կոմիտաս և Ամատունեաց Մատթէոս եպիսկոպոսները, Վարք հաւատարիմը, զոր վասն բռնութեան աշխարհին էին արձակեալ, զի ծանուցեն թագաւորին: Վիճաբանութիւններից յետոյ ճշմարիտ է ճանաչուում երեք առաջին տիեզերական ժողովների վճիռը միայն, մերժուում է Քաղկեդոնի ժողովը և հրամայուում է Պարսից թագաւորի կողմից ուղիղ ճանաչել միայն Հայոց հաւատը, որովհետև միայն նա է համաձայն Յ տիեզերական ժողովների վճռին, ինչպէս վկայում է նաև գերութեան մէջ եղած Երուսաղէմի պատրիարք Զաքարիան (609—629)¹։ Նեստորականները պարտուած են և Հայոց հետ միանում են Կամիլչով մետրոպոլիտը ուրիշ տասն եպիսկոպոսների հետ, որոնց անունները չեն յիշում Սեբէոսն ու Ասողիկը, ընտանաւորութեան թագաւորին Շիրին և քաջն Սմբատ և բժշկապետն մեծ²։ Բացի այն, որ Զաքարիա պատրիարքը յիշում է իբրև այդ ժողովում ներկայ, սկզբից էլ շեշտում է, որ ժողովը եղել է «յետ գերութեանն Երուսաղէմի»։ Իբրև եպիսկոպոս Պարսկաստան գնացած Մամիկոնեից Կոմիտասը՝ Հայոց կաթողիկոս դարձած, իւր եկեղեցու դաւանութեան թուղթն է տալիս ժողովին և նրա հետ միանում են Կամիլչով մետրոպոլիտն ու վերև յիշուած տասն եպիսկոպոսները, անուն անուն յիշուած Կոմիտասի հաւատոյ թղթի մէջ³։

Ե՞րբ է եղել այդ ժողովը. Կոմիտաս կաթողիկոսի թուղթը մեզ ոչ մի ցուցումն չէ անում թուականի համար։

1) Հմմտ. Smith-Wace, Dictionary of the Christian Biography, London, 1887. IV. էջ 1207.

2) Հմմտ. մեր. Die armenische Kirche in ihren Beziehungen zu den syr. Kirchen. Leipzig. 1904. էջ 62—65.

3) Գիրք Թղթոց, Թիֆլիս 1901, էջ 212—219. Հմմտ. Արարատ 1896. էջ 531—536, որտեղ Կարապետ վարդապետն հրատարակել է ամբողջ թուղթը. Գիրք Թղթոցի մէջ սկզբից մի խոշոր կտոր պակաս է։

բայց Սերէոսն ու Ասողիկը պարզ ասում են, ինչպէս վերին էլ յիշուեցաւ, թէ ժողովը եղել է Երուսաղէմի գերութիւնից յետոյ և Երուսաղէմի պատրիարք Զաքարիան գտնուում էր գերութեան մէջ ու մասնակցում էր ժողովին. այդ վկայութեան համաձայն Պարսից ժողովը պէտք է եղած լինի 614-ից յետոյ, ուրեմն հաւանօրէն 615-ին կամ 616-ին: Յօգուտ այդ թուականի է խօսում նաև այն փոքրիկ թուղթը, որ երկու ասորի միաբնակ եպիսկոպոսներ՝ Պետրոսն ու Մարութան, անձամբ ներկայացնում են Դուինում Կոմիտասին, իրենց միաբանութիւնը հայոց հետ ապացուցանելու համար, որովհետև այդ թղթի վերնագիրը որոշ կերպով ասում է, որ յիշեալ եպիսկոպոսները Դուին են եկել Խոսրով Պարուէզի Իէ. տարին, ուրեմն 616-ին կամ 617-ին: Այդ էր պատճառը, որ մինչև այսօր 615 կամ 616-ն է համարուել Պարսից ժողովի թուականը: 2

Բայց խնդիրը այնքան էլ պարզ չէ, ինչքան արտաքուստ երևում է. ասորական աղբիւրները 615-ին կամ 616-ին եղած մի ժողովի մասին մեզ ոչ մի տեղեկութիւն չեն տալիս, որքան մենք դիտենք: Այդ ուշագրաւ հանգամանքն արդէն կասկած է յարուցանում. և որովհետև խօսքը նեստորականների ու միաբնակների մէջ տեղի ունեցած մի վիճաբանութեան մասին է, որի մէջ, համաձայն միաբնակ հայ աղբիւրների վկայութեան, յաղթութիւնը միաբնակներն են տարել, ուստի ընականաբար հարց է ծագում, թէ արդեօք նեստորականները որևէ յիշատակութիւն չունին այս իրենց հետ եղած վիճաբանութեան մասին: Եւ այդ հարցին մենք կարող ենք պատասխանել, որ նեստորական ասորիները մինչև անգամ չատ ընդարձակ տեղեկութիւններ են տալիս մեզ մի վիճաբանութեան մասին, որ եղել է իրենց և «հերձուածող» միաբնակների

1) Արարատ 1896. էջ 536 և Սամուէլ Անեցի, Էջմիածին, 1893, էջ 290 շար.

2) Հմմտ. G. Hoffmann, Auszüge aus syr. Akten pers. Märtyrer, Leipzig 1880. էջ 121. և մեր վերև յիշուած գիրքը՝ էջ 63.

մէջ Խօսքով Պարուէզ արքայի հրամանով ու Գարրիէլ Դուրուսապետի (բժշկապետի) դրդմամբ, բայց ոչ թէ 615-ին կամ 616-ին, այլ Խօսքովի ԻԳ. տարին, այն է 612-ին կամ 613-ին:

Տեսնենք օրեմն նեստորական տարիները ի՞նչ են պատմում այդ հետաքրքրական ժողովի ու վիճարանութեան մասին: Երեք տեսակ աղբիւր ունինք այդ վիճարանութեան պատմութեան համար. ա) մի նեստորականի գրած ժամանակագրութիւն¹, բ) Գէորգ Իզալացու վկայարանութիւնը՝ գրուած Բարայ Իզալացու ձեռքով², և գ) նեստորականների Սիւնհազոս կոչուած գիրքը, որի մէջ ժամանակագրական կարգով գրուած են բոլոր նեստորական ժողովների վաւերական արձանագրութիւններն ու որոշուած կանոնները՝ ժողովականների ստորագրութեան հետ միասին, և ուր բերուած են նաև այս վիճարանական ժողովի առթիւ նեստորականների գրած թղթերն ու խնդիրները³:

Առաջին աղբիւրը՝ ժամանակագրութիւնը պատմում է հետևեալը. Դուրուսապետ Գարրիէլ Շիզարացին, բժշկապետը, որ Խօսքով Պարուէզ թագաւորի աչքն էր ձաւել նրա քրիստոնեայ թագուհի Շիրինին ամուլութիւնից ազատելով և այդպիսով պատճառ էր դարձել Մերգանշահի ծննդեան,

1) J. Guidi. Un nuovo testo siriano sulla storia degli ultimi Sassanidi, Leyden 1891, J. Brill. (=Actes du huitième Congrès international des Orientalistes). Գերմաներէն թարգմանեց Th. Nöldeke, die von Guidi herausgegebene syrische Chronik, Wien, 1893. (=Sitzungsber. d. Wien. Akad. phil.-hist. Classe. Band CXXVIII). Նորից արտատպած և Լատիներէն թարգմանած I. Guidi-ի ձեռամբ Corpus Script. Christ. Orient. Scriptores Syri. Series III, tomus IV, Chronica Minora հատորի մէջ, Paris, 1903. Բնագիր էջ 15—39, թրգմն. էջ 15—32.

2) G. Hoffmann, Auszüge aus syr. Akten pers. Märtyrer, Leipzig, 1880. էջ 91—115.

3) Synodicon Orientale ou Recueil de Synodes Nestoriens. հրատարակեց և Ֆրանսերէն թարգմանեց J.-B. Chabot. Paris, 1902. Գերմաներէն. O. Braun. Das Buch der Synhados, Stuttgart und Wien, 1900.

անցել էր հերետիկոսների (իմա միաբնակների) կողմը և ամեն կերպ աշխատում էր վնասել նեստորականներին։ Մար Սարբիշօ նեստորական կաթողիկոսը (596—604) մեռնում է 604-ին. Շիրին թագուհու ազդեցութեամբ կաթողիկոս է դառնում Գրիգոր Պորաթեցին, թէև եկեղեցականները և թագաւորն ինքն էլ խսկապէս Գրիգոր կաշկարցուն էին, ուզում Գրիգոր Պորաթեցին սակայն կարճ ժամանակ է կաթողիկոսութիւն անում. 3 կամ 4 տարուց յետոյ նա մեռնում է և եկեղեցին երկար ժամանակ մնում է առանց առաջնորդ, որովհետև Գարբիէլ Շիգգարացին ոչ միայն կարողանում է իւր ազդեցութեամբ նոր ընտրութիւնն արգելել, այլ և ուղղափառներին (նեստորականներին) մեծ նեղութիւն է պատճառում, քշելով նրանց Մար Պեթիոնի և Շիրինի վանքերից և նրանց տեղ ընկնելով իւր հերետիկոսական կուսակիցներին։

Բաւական ժամանակ անցնելուց յետոյ Գարբիէլը զրդում է թագաւորին հրաման տալ, որ նեստորականները հրաւիրուին մի վիճաբանութեան իւր կուսակիցների՝ միաբնակների հետ. որովհետև նեստորական եկեղեցին կաթողիկոս չունէր, որը կարող էր հրամայել, թէ ո՞վ պէտք է գնայ վիճաբանութեանը, ուստի կամաւոր կերպով արքունի գուռը գնացին հերետիկոսների հետ վիճելու համար Խզհայեարի մետրոպոլիտ Յովնադարը, Կարխա գըրեթ Մլխի մետրոպոլիտ Շուրխալըմարանը, Գէորգը Իզալայի լեռներից (այժմեան Թուր Արդին) և ուրիշները։ Գարբիէլն ու իւր կուսակիցները պարտուեցան և ւերս նեստորական ուղղափառները յաղթեցին։ Թէև թագաւորն էլ, աւելացնում է ժամանակագրութիւնը, յանդիմանեց Գարբիէլին և հրամայեց նրան նեստորականներին այլ ևս չնեղացնել, բայց Գարբիէլը շարունակեց ուղղափառներին ամբաստանել ամենախիստ կերպով, մինչև որ Իզալայի Գէորգին էլ մատնեց, թէ նա թողել է մոգաց կրօնը. քրիստոնեայ է դառել* ու անարդում է Որմզդին ու

*) Պարսից պետական օրէնքով մոգական կրօնը թօյնելը և քրիստոնեայ դառնալը մեծ յանցանք էր համարւում և պատժոււմ էր մահով։

Քեւանին: Այդ մատնութեան հետեանքն այն եղաւ, որ Խոսրով Պարուէզը հրամայեց Գէորգին բանտարկել և մի տարուց յետոյ խաչել տուեց նրան Բեհարդաշիր¹ քաղաքի հրապարակում²: Գլխաւոր դերը կատարում է ուրեմն մեզ արդէն ծանօթ Գարբիէլ մեծ բժշկապետը, թագաւորի ու թագուհու սիրելին, որ նպատակ էր դրել իրեն առաջ, ինչպէս երևում է, ոչնչացնել նեստորականութիւնը Պարսից երկրում և միաբնակութիւնը հաստատել: Աւելի մանրամասն տեղեկութիւններ է տալիս վիճաբանութեան մասին երկրորդ ազբիրը՝ Գէորգ Իզալացու ճշմարտապատում վկայաբանութիւնը, որի հեղինակն է նեստորական Մար-Բարայը, Գէորգ նահատակի կրտսեր ժամանակակիցը:

Ահա նրա տուած տեղեկութիւնները: Գէորգ Իզալացին յաղթահարում է Խաննանեաններին³ և Մեսալեաններին, ապա նաև հին աստուածաշարչարների հերձուածն է տապա-

1) —Սելեկիա. տես Hoffmann, Auszüge, էջ 90.

2) Chronicon Anonymum, ed. et interpr. est I. Guidi, (Corp. Script. Chr. Orient. Scr. Syri. III, t. 4, Chronica Minora), էջ 19, 21—23 բնագիր, 18—21 Լատին. թարգմն. հմտ. Նեօլոգիէի Գերմ. թարգմ. էջ 13, 18—22.

3) Խաննանա եղհայեաբցին Մծրինի գալրոցի նշանաւոր ուսուցիչներից մէկն էր, որ մօտ 800 աշակերտ ունէր և արդէն Խիզբիէլ կաթողիկոսի օրով (567—580) պատճառ էր դարձել մի մեծ դաւանական վէճի նեստորական եկեղեցու մէջ: Նա շնորհիւ իւր հետախուզութիւնների և մեկնաբանութեան հասել էր այն եզրակացութեան, որ անբնգունելի պէտք է համարել Թէոդոր Մոպսուեստացու մեկնաբանութիւնն ու դաւանութիւնը և վարդապետում էր ի միջի այլոց հետեւալը: Մարգուս ի ծնէ յատուկ է մեղքը. այդ պատճառով նա անպատասխանատու է, ինչ որ մարմնին է վերաբերում: Միւս կողմից մարդն անմահ է, որչափ որ նա միևնոյն բնութիւնն ունի Աստուծոյ հետ (իբրև հոգի). այդպիսով կարելի է խօսել ուրեմն միայն հոգիների վերստին միացման մասին Աստուծոյ հետ, և ոչ թէ մարմնի յարութեան: Սրանով վերացնում էր Խաննանան նաև Քրիստոսի երկու էութիւններն ու նրանց անխառն որոշութիւնը. այդ է պատճառը, որ Գէորգի կենսագիր Մար-Բարայը նրան աստուածաշարչարների, այսինքն Յակոբիանների կողմն է դնում: Հմտ. G. Hoffmann, Auszüge, էջ 117.

լուժ, որոնք այն ժամանակ մի բժիշկ ներկայացուցիչ ունէին արքունիքում: Այդ աստուածաշարչար Շիգգարացին մտնում է թագաւորի մօտ և ասում, թէ նոցա ուսուցիչն անգամ (խօսքը երևի Խաննանային հետևող մի նեստորականի մասին է) համաձայնում է ինձ հետ և նամակ է ուղարկել իւր մի աշակերտի ձեռքով: Թագաւորը նրան լիազօրութիւն է տալիս իրեն ուղած մարդուն ընտրելու և (նեստորականները) կաթուղիկոս դարձնելու: Այն ժամանակ արևելքի եպիսկոպոսները շատ զայրանում են և պատրաստուում են շտապով արքունիք գնալու և թագաւորին հասկացնելու, որ այդ կարգադրութեամբ ամբողջ Պարսից աշխարհի եկեղեցում մեծ խռովութիւն կընկնի և թագաւորը կարող է վերջը գեռ նրանց մեղադրել, թէ ինչո՞ւ ժամանակին իրեն չեն պարզել իրերի դրութիւնը: Եպիսկոպոսները թուղթ են գրում Իզալայի կրօնաւորներին և խնդրում են ուղարկել Գէորգին, որ իրենց օգնէ, մանաւանդ որ նա ծանօթ է պալատական կարգերին: Գէորգը մի քանի ընկերներով իսկոյն ճանապարհ է ընկնում. երբ Գէորգը արքունիք է հասնում, նեստորական եպիսկոպոսները նրան ուղարկում են պալատ իւր հին ծանօթներից (առաջնա ծառայած է եղել պալատում) իմանալու իրերի դրութիւնը. նրան յայտնում են պալատում, որ դրութիւնը վտանգաւոր է, հերետիկոսները մեծ վտահութիւն ու շնորհ են վայելում, աւելի լաւ է նեստորական եպիսկոպոսներն երթան իրենց տեղերը: Բայց Գէորգը ուշադրութիւն չի դարձնում այդ հանգամանքի վրայ և համոզում է, որ թոյլ տրուի եպիսկոպոսներին պալատ գալու և իրենց խնդիրն անելու: Եպիսկոպոսներին էլ քաջալերում է Գէորգը և վերջապէս նրանց արքունիք տանելով մի պալատականի միջոցով յայտնել է տալիս թագաւորին իրենց խնդիրը, այն է՝ համաձայն օրէնքի և սովորութեան թոյլ տրուի իրենց մի գլուխ ընտրելու:

1) Այս նախադասութիւնը, որ Հոֆմանը լաւ չէ հասկացել, գրինք համաձայն Նեօլդեկէի սրբագրութեան. տես «Die von Guidi herausg. syrische Chronik, übersetzt und commentiert von Th. Nöldeke», էջ 21. ծանօթ. 4.

Պալատականի (Պարրուխան անուամբ, ասած է ընդհրում) զեկուցմանը թագաւորը պատասխանում է. «Առաջ պէտք է տեղեկանալ, թէ ո՞րն է ճշմարիտ հաւատը, ապա նրանց իշխանաւոր կնշանակեմ»։ Պարրուխանը առարկում է՝ եթէ թագաւորը կամենայ, կարող է մի վիճարանութիւն կամ հակաճառութիւն տեղի ունենալ այդ խնդիրը պարզելու համար։ Թագաւորը պատասխանում է՝ մենք չենք հրամայում, բայց թող լինի (?) այն մեր առաջ. և այդ խնդիրը առ ժամանակ մի կողմ է դնում առանց որոշում անելու։ Պարրուխանը մի անգամ էլ է խօսք բաց անում հակաճառութեան մասին և առաջարկում է, Քէորգից նախօրոք խրատուած լինելով, հրամայել, որ քրիստոնեաներն իրենց դաւանութիւնները դրաւոր ներկայացնեն։ Թագաւորն այս բանին համուձայնուում է. նետտորականները ժողով են անում և իրենց հաւատոյ դաւանութեան մէջ բոլորովին պարզ կերպով յայտարարում են, որ Աստուծոյ Ռրգի Քրիստոսի մի անձնաւորութեան մէջ կայ երկու ընտելիւն եւ երկու էութիւն՝ աստուածային և մարդկային, որոնք պահպանում են իրենց անանձնայատկութիւնները։ Հաւատոյ դաւանութեանն ապակցում են այն առարկութիւններն ու հարցերը իրենց լիակատար հերքման հետ միասին, որ միամտաբար տալիս են մոլորութեան մէջ գանուող հերետիկոսները։

Հաւատոյ դաւանութիւնն ու առարկութիւնները Քէորգի իզալացին թարգմանում է պարսկերէն և յանձնում Պարրուխանին։ Թագաւորը կարգալուց յետոյ պատասխանում է թող իմացած լինին, որ քանի նետտորի անունն են քարոզում, չեմ թոյլ աայ, որ գլուխ (կաթուղիկոս) ունենան։ Նա երեք հարց տուեց, պահանջելով պատասխանել. ա) Ռ՞րն է առաքեալների քարսզած հաւատը և ո՞վ է հեռացել ամենից առաջ այդ հաւատից՝ (միաբնակ) վանականները, թէ նետտորականները. բ) ի՞նչ է Մարիամը. Աստուածածին, թէ մարդածին. գ) նետտորից առաջ եղե՞լ է մի վարդապետ, որ Քրիստոսին երկու ընտելիւն և երկու էութիւն վերագրէր։

Այս հարցերին պատասխանեցին եպիսկոպոսները հա-

մաձայն Ս. Գրքի և եկեղեցական հայրերի և ուղարկեցին թագաւորին: Սա նոյն գիրքը բռնեց, ինչ որ առաջ, սկզբում լռեց, իսկ մի քիչ անցնելուց յետոյ իւր սովորութեան համաձայն ելաւ զնազ Բեթ-Մադայէ՜ 1 նահանգը 2: Այնուհետեւ պատմուած է, թէ ինչպէս նեստորականները սրոչում են հետեւել նրան, զնում են նրա յետեւից Մարասան առանց որ և է օգուտի, ինչպէս Գարրիէլը փութում է այնտեղ միաբնակների ձեռքը ձգել մեծ հաշակունեցող, մինչ այն նեստորականներին պատկանող Ս. Սարգսի ուխտատեղին, ինչպէս Գէորգն ու նեստորական եպիսկոպոսները հակառակում են, որի հետեւանքն այն է լինում, որ Գարրիէլը մասնում է Կարխա գը բեթ Սլոխի մետրոպոլիտ Շուբխալըմարանին իրիւ թագաւորի դէմ դաւադրութիւն սարքել տուողի և նրան սպանել ցանկացողի, իսկ Գէորգ Իզալացուն իրիւ նախկին մոգական կրօնի երկրպագուի և այժմ՝ ուրացողի: Գէորգին բանտարկում են 7 + 8 ամիս 3 և ապա խաչում՝ յունաց 826 թուին Վասն խրայ» ամսի 14-ին, որ է Պարսից թագաւոր Արմզգի որդի Խոսրովի ԻԵ. տարին (=14-ին Յունուարի 615 թուի) 4:

Այստեղ էլ ուրեմն շատ մեծ դեր է կատարում Գարրիէլ բժշկապետը, որի ազդեցութեան շնորհիւ իզուր են

1) Մեդիա—Մարասան.

2) Մինչև այստեղ, մեզ հարկաւոր եղած մասը բերինք բնդարձակ, տեղ տեղ բառացի թարգմանելով:

3) Գ. Հոֆմանը յայտնում է, որ ձեռագրի մէջ 8-ից յետոյ եկող բառը եղծուած է եղել և մի նորագոյն գրիչ վրայով գրել է «տարի». այնպէս որ դուրս է եկել 7 ամիս և 8 տարի. մենք տեսանք, որ ժամանակագրութիւնը, մեր առաջին աղբիւրը, ամբողջ բանտարկութեան ժամանակը համարում է մի տարի. երևում է, որ կենսագիրը աւելի որոշ գրել է 7+8—15 ամիս. եղծուած «ամիս» նշանակող ասորերէն բառի տեղ նոր գրիչը հեշտութեամբ կարող էր «տարի» նշանակող բառը կարգաւ ու գրել. նրանք միմեանց բաւական նման են: Հմմտ. G. Hoffmann, Auszüge, էջ 110, ծանօթ. 999. և Th. Nöldeke, Guidi's Chronik, էջ 21, ծանօթ. 7.

4) Sht Hoffmann, Auszüge aus syr. Akteu pers. Märtyrer, Leipzig, 1880. էջ 91.—115.

անցնում նեստորականների բոլոր ջանքերը իրենց համար կաթողիկոս ընտրելու նկատմամբ: Բացի այս մանրամասն տեղեկութիւններից վիճաբանութեան մասին, որ ինչպէս շուտով կաեսենք, միանգամայն հաւաստի են և ապացուցում են նաև նեստորականների «Ժողովոց Գրքի» փաստաթղթերով, Գէորգի վկայաբանութիւնը միջոց է տալիս մեզ նաև որոշելու, թէ երբ է եղել այդ վիճաբանութիւնը: Խաչի մահով մեռնելուց առաջ Գէորգը 15 ամիս բանտարկուած է մնում. մահուան օրն անգամ յայտնի է մեզ՝ 615-ի Յունուարի 14-ը. նա բանտարկուած է եղել ուրեմն սկսած 613-ի Հոկտեմբեր ամսից: Նեստորական եպիսկոպոսները Մարաստանում երկար սպասել են թագաւորի հրամանին, նախ քան Ս. Սարգսի ուխտատեղու վէճը. Գէորգի վկայաբանութիւնն ասում է, որ «երկար ժամանակ մնացին նօքա այնտեղ, առանց եկեղեցական խնդիրների մասին խօսելու»: Եթէ այդ «երկար ժամանակը» ընդունենք գէթ 4 ամիս, այն ժամանակ վիճաբանութեան ժամանակը կլինի 613-ի գարնան ամիսները, հաւանօրէն Ապրիլ Մայիս Յունիս, յամենայն դէպս 612/613 թուականը, ուրեմն Խոսրով Պարուէզի թագաւորութեան ԻԳ. տարին ¹:

Եւ յիրաւի, մեր երկրորդ ազբիւրը, «Ժողովոց Գիրքը» 2 անգամ յիշում է Խոսրովի ԻԳ. տարին, իբրև այսպէս կոչուած Պարսից ժողովի թուական: Նախ նեստորական եպիսկոպոսների թագաւորին ներկայացրած շնորհակալական ուղերձի և ջատագովութեան վերնագրի մէջ ², և ապա հաւատոյ դաւանութեան վերնագրում. վերջին անգամ յիշուած է այսպէս. «Հետևում է հաւատոյ տուժարը, թագաւորի հրամանով կազմուած այն եպիսկոպոս հայրե-

1) Խոսրով Պարուէզի ԻԳ. տարին սկսում է 612-ի Յունիսի 21-ից:

2) Synodicon Orientale par Chabot, Paris 1902. էջ 562 շար. բնագիր, և էջ 580 Ֆրանս. թարգմ. Հմտ. Օ. Braun, Das Buch der Synhados, Stuttgart und Wien, 1900. էջ 307.

րից, որոնք Հորմիզդի որդի Խոսրովի ԻԳ. տարին հաւաքուել էին Բարձր Գուռը»¹։

Աւելորդ ենք համարում երկար խօսել այլևս Գ. աղբիւրի, «ժողովոց Գրքի» մասին. այնտեղ պահուած, ամեն կասկածից ազատ վաւերական փաստաթղթերը բոլորովին նոյնն են, ինչ որ մենք վերևը տեսանք Գէորգ Իզալացու վկայաբանութեան մէջ յիշուած։ Մի դիմումն թագաւորին նոր կաթուղիկոսի ընտրութեան թոյլտուութեան համար, մի ուղերձ ու ջատագովութիւն, մի նեստորական հաւատոյ դաւանանք և ապա մի ընդարձակ հերքումն հակառակորդների դէմ, ուր առանձնապէս նաև Մարիամի Աստուածածին լինելու դէմ, վերջապէս պատասխան նոցա, որոնք ասում են թէ նեստորականները նախկին Ս. Հայրերի աւանդած հաւատից հեռացել են. վերջինս սկսում է մինչև անգամ այսպէս. «եղե՛լ է նեստորից առաջ մէկը, որ ասած լինի թէ Քրիստոսը երկու ընտրութիւն և երկու անձն ունի». ուրեմն ճիշտ այն, որի համար բացատրութիւն էր պահանջում Խոսրով Պարուէզը, համաձայն Գէորգ Իզալացու վկայաբանութեան (տես վերևը)»²։

Այս բոլոր տեղեկութիւնները ցոյց են աւելիս բոլորովին պարզ կերպով մի բան. մենք տեսնում ենք, որ սկսած 604 կամ 605 թուականից միաբնակ Գուրուստպետ Գարբիէլը Շիրին թագուհու միջոցով այնպիսի ազդեցութիւն է ձեռք բերել բոլոր եկեղեցական խնդիրներում Պարսից պետութեան մէջ, որ ամեն կերպ և յաջողութեամբ աշխատում է բոլորովին ոչնչացնել նեստորականութիւնը և որքան կարելի է ոյժ տալ միաբնակութեանը։ Միաբնակ

1) Synodicon Orientale, էջ 564 Ասորերէն, 581 չար. Ֆրանսերէն. Հմմտ. O. Braun, Das Buch der Synhados, էջ 309.

2) Բոլոր այդ փաստաթղթերը տես Synodicon Orientale, էջ 562—580 Ասորերէն, էջ 580—598 Ֆրանսերէն թարգմանութիւն. Հմմտ. O. Braun, Synhados, էջ 307—331. Պարսից ժողովի վերաբերեալ միւս նիւթերն էլ՝ Guidi-ի ժամանակագրութեան կարևոր կտորներն ու Գէորգի վկայաբանութիւնը, Chabot-ն թարգմանելով Ֆրանսերէն, տպել է Synodicon-ի մէջ, էջ 625—634.

ներք խնամք ու փտահուսթիւն են վայելուի այն ինչ 608-ից կամ 609-ից սկսած նեստորականներին չի թոյլատրուում մինչև անգամ իրենց համար կաթուղիկոս ընտրել: Բանն այնտեղ է հասնում, որ Խոսրով Պարուէզը լիազօրութիւն է տալիս միաբնակ Գարրիէլ Շիրգարացուն նեստորականներին գլխին կաթուղիկոս նշանակել, ում որ ինքը կամենայ: Այդ վերջին անգամահուսթեան առաջն աւանելու համար է, որ նեստորական եպիսկոպոսները «զայրացած» արքունիք են դալիս՝ հասկացնելու թագաւորին թէ ինչպիսի վտանգաւոր հետեանքներ կարող է ունենալ այդպիսի կարգադրութիւնը: Նոցա ամենագլխաւոր ներկայացուցիչ Գէօրգ Իզալացուն պալատում մինչև անգամ պարզ կերպով հասկացնում են, որ իզուր են եկել նեստորականները և աւելի լաւ է ցրտին ու իրենց տեղերն երթան, որովհետև հետեանիկոսները (==միաբնակները) մեծ վտահուսթիւն են վայելուել: Եւ իրօք նեստորականներին ոչ միայն չի յաջողում իրաւունք ստանալ իրենց համար կաթուղիկոս ընտրելու, այլ Գարրիէլ բժշկապետի դրդամբ թագաւորը նրանց գլխաւորներին քանտարկում է և նշանաւոր Գէօրգ Իզալացուն էլ վերջը խաչել տալիս: Բոլոր վիճարանութիւններն և գրաւոր ներկայացրած հաւատոյ դաւանութիւններն ու հերքումները մնում են կամ անհետեանք կամ անպատասխան: Միայն այն շափով են օգտուում նեստորականները, որ Գարրիէլին էլ չի յաջողում իւր ուղած մարդուն նեստորականների կաթուղիկոս դարձնել, ինչպէս նրան լիազօրութիւն էր տուել Խոսրով Պարուէզը¹:

Խոսրով Պարուէզի այս շրջանի քաղաքականութեան համար շատ բնորոշ է այն տեղեկութիւնը, որ տալիս է մեզ Իրիգոր Բարհեբրէսը. Խոսրովը թոյլ է տալիս Եդեսասա-

1) Արեմն յաղթող միաբնակ կուսակցութիւնն էլ անյաջողութեան է հանդիպում և ինչպէս նեստորական ժամանակագրութիւնն իրաւամբ նկատում է, Գարրիէլը պարտութիւն է կրում նեստորականներէց: Բայց ի հարկէ միայն այս կէտում: Հմտ. Nöldke, Die von Guidi herausg. syrische Chronik, էջ 21. և ծանօթ. 4. նոյն տեղում:

ցիներին, որոնք ստից գլուխ միաբնակ էին, ընտրելու իրենց գաւանութեան մի եպիսկոպոս իրենց համար¹, ուրեմն բացարձակ պաշտպանութիւն միաբնակներին և հալածանք նետարականների դէմ: Բայց որ Խոսրովը «թոյլ է տալիս» ընտրել, արգէն ցոյց է տալիս, որ նա արգելած է եղել առաջ և անձամբ ամենեին համակիր չէ եղել միաբնակներին, այնպէս որ երեսօտացիներին շնորհած թոյլտուութիւնն էլ կատարուել է անշուշտ դարձեալ Գաբրիէլ բժշկապետի ջանքերով: Որ այդ այդպէս է, որ Խոսրով Պարուէզը ներքին կամ անձնական ոչ մի համակրութիւն չէ ունեցել դէպի քրիստոնէական որ և է եկեղեցի, պարզ կերպով երևում է այն հանգամանքից, որ Գաբրիէլ բժշկապետի մահից յետոյ միաբնակների մայրաքաղաքում² ունեցած վանքերն էլ աւերում են և 624 թուականից սկսած միաբնակների կաթուղիկոսական աթոռն էլ թափուր մնալու դատապարտում²: Առհասարակ իւր թագաւորութեանէ ընթացքում Խոսրովը դառնացրել է կարելի է ասել բոլոր քրիստոնէաներին, որոնց վրայ անշուշտ շատ մեծ ազդեցութիւն պիտի անէր նաև երեսօտէմի առումն ու Սուրբ տեղերի պղծուիլը: Այդ է պատճառը, որ թէ ասորի և թէ հայ պատմիչները առանձին գոհունակութեամբ են խօսում հայրասպան Շերոէի ապստամբութեան և Խոսրով Պարուէզի անկման մասին:

Ուրեմն միանգամայն սխալ պիտի համարել Սերէոսի և Ասողկան տուած այն տեղեկութիւնը, թէ Խոսրովն ինքը հետաքրքրուել է առանձնապէս իւր պետութեան մէջ եղած քրիստոնէաների վիճակով և ճշմարտութիւնը պարզելու և միութիւն վերականգնելու համար է հրաւիրել այսպէս կոչուած Պարսից ժողովրդ: Մենք տեսանք, որ այդ գումարման միակ շարժառիթը նետարականների կաթուղի-

1) G. Barhebr. Chron. eccl. I, էջ 265 շար.

2) G. Barhebr. Chron. eccl. II, էջ 111. Հմմտ. այս դրութեան համար առանձնապէս Geschichte der Perser und Araber zur Zeit der Sasaniden, aus der arabischen Chronik des Tabari übersetzt von Th. Nöldeke. Leyden 1879, էջ 358.

կոսութեան խնդիրն էր, որի յաջող լուծման ամեն կերպ արգելք լինել էր աշխատում, յայտնի քրիստոնէական եղբայրսիրութեամբ, մի այլ քրիստոնեայ՝ դուրուստպետ միաբնակ Գաբրիէլը:

Արդեօք վիճաբանութիւն եղե՞լ է, ինչպէս վկայում է ասորական ժամանակագրութիւնը, թէ թագաւորը թոյլ չի տուել այդպիսի հակաճառութիւն սարքել և միայն գրաւոր բացատրութիւններ է պահանջել, ինչպէս պնդում է Գէորգ Իզալացու կենսագիրը, երկրորդական խնդիր է մեզ համար. այսքանը միայն պարզ է, որ միաբնակները շատ մեծ եռանդ են գործ դրել տապալելու հակառակորդ նեստորականներին ու թոյլ չտալու, որ նրանք կաթուղիկոս ունենան: Հայոց Կոմիտաս կաթուղիկոսը իւր տուած դաւանութեան թղթի մէջ անուն անուն յիշում է 9 միաբնակ եպիսկոպոս և աւելացնում է «և այլ բազում եպիսկոպոսք ... և չն», որոնք Պարսից արքունիք են գնացած եղել¹: Պարզ է նաև, որ վիճաբանութիւն սարքելու նպատակ եղել է և գուցէ Գաբրիէլի ու միաբնակների իղձն է եղել առանձնապէս մէջ տեղ բերել նաև այն դաւանութեան թղթերը, որ մի ժամանակ Սիմէոն Բեթ-Արշամցին հաւաքել էր հայերից, յոյներից ու ասորիներից, թէ նրանք հնու են բոլորովին նեստորի վարդապետութիւնից և ներկայացնելով Կաւատ թագաւորին (488—531) հաստատել էր տուել արքայական կնքով². Սերէոսն ու Ասողիկը գոնէ մի այդպիսի տեղեկութիւն տալիս են³:

1) Տես Կոմիտասի թուղթը՝ Գիրք Թղթոց, Տիփլիս 1901, էջ 218.

2) G. Barhebr. Chron. eccl. III, էջ 85. Հմմտ. Գիրք Թղթոց, էջ 41—47. Թուղթ Հայոց ի Պարոս առ ուղղափառս. և այդ բոլորի մասին Erwand Ter-Minassiantz, Die armen. Kirche in ihren Beziehungen zu den syr. Kirchen, 1904, էջ 35. 33 շար. 63.

3) Սերէոս, էջ 123., Ասողիկ 97. «Նւ հրաման տուեալ թագաւորն խնդիր առնել ի գանձու տեղւոյն, և գտին գրեալ գնիկիայն հաւատս ճշմարիտս և ի վերայ հասեալ ըստ միաբանութեան հաւատոյ աշխարհիս Հայոց, որ էր կնքեալ մատանեալ Կաւատայ արքայի և որդւոյ նորա Խոսրովուս:

Սակայն ինչ գործ ունէին հայերը այս ժողովում. Սերէոսի և Ասողկան մէջ պահուած հայկական աղբիւրի համաձայն երկու հայ եպիսկոպոսները՝ Կոմիտաս Մամիկոնէից և Մատթէոս Ամատունեաց, միայն պատահմամբ են ընկել այս գումարման մէջ: Թէև մեր հայ աղբիւրը պարզ կերպով ասում է, թէ յիշեալ ժողովն եղել է Երուսաղէմի գերութիւնից յետոյ և Ջաքարիա պատրիարքն էլ ներկայ է եղել ժողովին, բայց վերեւի բոլոր հանգամանքներն ի նկատի ունենալով մենք շատ անհաւանական ենք համարում այդ, շատ դժուար է ընդունել, որ Խոսրով Պարուէզը այդքան երկար տարիներ զբաղուել է քրիստոնեաների դաւանութեան խնդրով և գումարել է տուել երկու ժողով, մէկը 612/613-ին ինչպէս ցոյց են տալիս ասորական աղբիւրները, իսկ միւսը 614-ից յետոյ, ինչպէս դնում է հայկական աղբիւրը: Մանաւանդ որ չգիտենք թէ այս Բ. ժողովն էլ ինչ պիտի անէր, քանի որ Ա. ժողովից յետոյ բոլորովին ճնշուած էին նեստորականները և նրանց դէմ եղած հալածանքը իւր գագաթնագէտին էլ հասել Գէորգ Իզալացու բանտարկութեամբ: Այդ պատճառով մենք լսի թիւրիմացութեան արդիւնք ենք համարում և սխալ Ներսէս Գ. Շինողի թղթի մէջ Ջաքարիա պատրիարքի անուճն ու Երուսաղէմի տուճն յիշուելը և ենթադրում ենք, որ այնտեղ յիշուած Պարոից ժողովը նոյնն է, ինչ որ գումարել է տուել Խոսրով Պարուէզը Գաբրիէլ Շիպգարացու գրգամք 613 թուին:

Եթէ այդպէս է, այն ժամանակ Մամիկոնէից եպիսկոպոս Կոմիտասի Պարոից ժողովից իբրև Հայոց Կաթուղիկոս վերագառնալն էլ նոր լուսարանութիւն է ստանում և մեզ համար աւելի հասկանալի դառնում:

Սերէոսը վկայում է, որ Խոսրով Պատուէզի ԻԱ. տարին ուրեմն 610/611-ին վախճանուած է Արարհամ կաթուղիկոսը ¹, ինչպէս երևում է Խոսրովն ընդհանուր արգելք

1) Սերէոս, գլ. ԻԳ. էջ 77—78, մեր կարծիքով Սերէոսի այդ կտորը ուրիշ կերպ հասկանալ կարելի չէ:

է դրած եղել՝ առանց իւր գիտութեան Կաթուղիկոսի ընտրութիւն չկատարել, այդ է ապացուցանում վերին յիշուած թոյլաութիւնը՝ Եդեսոսայի համար նոր միաբնակ եպիսկոպոս ընտրելու համար: Հայոց Հայրապետական Աթոռը բաւական երկար ժամանակ, մօտ 2 տարի թափուր է մնում այդ պատճառով, վերջապէս որոշում են պատգամաւոր ուղարկել Խոսրով Պատուէզի մօտ՝ «երկրի ծանր դրութիւնը նկարագրելու համար»: Որ պատգամաւոր են ընտրուում երկու եպիսկոպոս, որոնցից մէկը յատկապէս Հայ եպիսկոպոսութեան աւագը՝ Մամիկոնէից եպիսկոպոսը¹, պարզ կերպով ցոյց է տալիս, որ եկեղեցական լանդիքն այստեղ մեծ դեր է կատարել և եղել է պատգամաւորութեան ամենագլխաւոր նպատակը: Շատ հաւանական է, որ Կոմիտատը իբրև եպիսկոպոսների ու իշխանների կողմից արգէն ընտրուած՝ գնացել է Ամատունեաց եպիսկոպոսի հետ Պարսից Գուռը, որպէսզի պէտք եղած հաճութիւնն ու հաստատութիւնն ստանայ Խոսրով Պարուէզի կողմից: Իբրև միաբնակութեան ներկայացուցչի յաջողուել է այդ նրան, ի հարկէ Սմբատ Բագրատունու և Գարբիէլ բժշկապետի միջոցով, շատ հեշտութեամբ, և այդ է պատճառը անշուշտ, որ իբրև եպիսկոպոս Պարսից Գուռը գնացած Մամիկոնէից Կոմիտաս եպիսկոպոսը, ժողովում ներկայանում է իբրև Հայոց կաթուղիկոս² և իւր հօտի կողմից, միաբնակ ասորի եպիսկոպոսների լանդրով, դաւանութեան թուղթ է ներկայացնում:

Եզրակացութիւն: Ա. Այսպէս կոչուած Պարսից Ժողովն եղել է ամենայն հաւանականութեամբ 613 թուին³


1) Հմմտ. Գիրք Թղթոց, էջք 40, 48, 52, 55, 62, 70, 73, 76, 78, 81, որ Մամիկոնէից եպիսկոպոսի անունը գալիս է անմիջապէս Հայոց կաթուղիկոսի անունից յետոյ:

2) Գիրք Թղթոց, էջ 218. «Նս Կոմիտաս մամիկոնէից եպիսկոպոս, որ յաջորդեցայ ի կաթուղիկոսութիւն Հայոց Մեծացոյ»:

3) Հակառակ չէ կարող լինել այդ թուականին նաև Մարութայի ու Պետրոսի թղթի վերնադրի թուականը, որովհետև Իլ և Ին հեշտութեամբ չփոթուել կարող էին:

նեստորականների կաթուղիկոսութեան խնդրի առթիւ
 Բ. Այդ ժողովում պատահամբ ներկայ է լինում նաև
 Մամիկոնէից Կամիտաս եպիսկոպոսը, որը նոյն ժողովին՝
 իբրև Հայոց կաթուղիկոս, դաւանութեան թուղթ է ներ-
 կայացնում. ուրեմն Կամիտասի կաթուղիկոսութեան առա-
 ջին տարին է 613 թուականը. Գ. Ներսէս Գ. Շինողի
 առ Կոստանս Բ. կայսր գրած թղթի մէջ այդ ժողովի յի-
 շատակութեան առթիւ սխալմամբ է յիշուած Զաքարիա
 պատրիարքը իբրև ներկայ և ժողովը եղել է Երուսաղէմի
 գերութիւնից ոչ թէ յետոյ, այլ առաջ:

Երուանդ վարդապետ



ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ



Էդիսոնը սիրելի է շանթին. Այս է հաղորդում «Ռուս»-ի 78
 համարը Ահանատեսը պատմում է, թէ ինչպէս մի վայրկենի
 մէջ կասր կասր փշրեց ահադին ժայռը... Իսկ ամենազլխաւորն
 այն է, որ այդ շանթը անդրադարձ ազդեցութիւն չունի: Փորձ
 կատարողները այնքան մօտ են եղել ժայռին, որ եթէ այն լինէր
 նիարակլիցիբին կամ որոտացող սնդիկ, նրանց մաս մաս կանէր:
 Բայց նորա գգացել են մի թեթև ցնցում միայն փշրուող ժայռից
 յառաջացած: Եւ այս լուրը յայտնողը պնդում է թէ նոյն և
 նման էր շանթի հարուածի. որովհետև ուրիշ նիւթերից յառա-
 ջացած հարուածը առարկայի հետ ոչնչացնում է և նրա
 շուրջը գտնուած միւս իրերը, սակայն այստեղ վնաս կրողը
 միայն այն առարկան է, որին ուղղուած է հարուածը: Լրատուն
 համարում է այն մի «հրեշտակն ելեքարահան ոյթ» և բաւական
 է համարում 10 այնպիսի հարուած, որ ոչնչացնէ մի բերդ և
 100-ը, որ մոխիր դարձնէ Պարիզ կամ Բեռլին քաղաքները:

Էդիսոնը իւր գաղտնիքը ոչ ոքի չի ուղում յայտնել, թէ և
 լրատներ և հետաքրքրուողներ բազմաթիւ են. որովհետև եթէ
 մի այսպիսի զօրութիւն անցնի կառավարութեան ձեռքը՝ յա-
 ւրեանս կատրկացնէ մարդկութիւնը. իսկ փորձը շատերի առաջ
 առանց քաշուելու կրկնում է: